# «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1**. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ օրենք) 7-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«4. Ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) և թույլատրելի առավելագույն 3,5 տոննա քաշը գերազանցող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով միջպետական փոխադրումներ (բացառությամբ ոչ առևտրային փոխադրումներ) իրականացնող կազմակերպությունները պետք է ունենան գործարար բարի համբավ, ֆինանսական անհրաժեշտ միջոցներ և մասնագիտական որակավորում:

5. Լիազոր մարմինը միջպետական փոխադրումներ իրականացնելու բոլոր տեսակի իրավունքները տրվում են միայն այն կազմակերպություններին, որոնց վերաբերյալ անհրաժեշտ տվյալներն առկա են լիազոր մարմնի միջպետական փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների էլեկտրոնային գրանցամատյանում: Էլեկտրոնային գրանցամատյանում հաշվառվելու համար կազմակերպությունները լիազոր մարմնին ներկայացնում են բանկային տեղեկանք առնվազն 9000 եվրոյին համարժեք դրամ մեկ տրանսպորտային միջոցի դեպքում և առնվազն 5000 եվրոյին համարժեք դրամ՝ յուրաքանչյուր լրացուցիչ տրանսպորտային միջոցի համար, կամ բանկային երաշխիք սահմանված գումարի չափով, ինչպես նաև փոխադրումների կառավարչի մասնագիտական որակավորման վերաբերյալ տեղեկատվություն:
6. Կազմակերպությունը պետք է ունենա մասնագիտական որակավորման վկայական ունեցող փոխադրումների կառավարիչ: Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ կամ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում անընդմեջ 10 տարվա կառավարման ստաժ

ունեցող անձինք ազատվում են որակավորման քննություն հանձնելուց: Մասնագիտական որակավորման քննություններ ընդունելու և մասնագիտական որակավորման վկայական տալու կարգը, մասնագիտական որակավորման վկայականի նկարագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. 7. Կազմակերպության և փոխադրումների կառավարչի բարի համբավի կորստի հիմնական գործոններ են հանդիսանում խախտումներն ու պատժամիջոցները հետևյալ ոլորտներում՝

1) առևտրային իրավունք.

2) անվճարունակության իրավունք.

3) վճարման և մասնագիտական աշխատանքի հետ կապված պայմաններ.

4) ճանապարհային երթևեկություն.

5) մասնագիտական պատասխանատվություն.

6) մարդկանց կամ թմրանյութերի առևտուր.

7) թվային տախոգրաֆի համակարգ.

8) փոխադրումներին ներկայացվող  պահանջներ:

8. 8. Սույն հոդվածի 7-րդ մասում նշված խախտումների տեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.Կազմակերպությունները գործարար բարի համբավի, ֆինանսական անհրաժեշտ միջոցների և մասնագիտական որակավորման տվյալների փոփոխության դեպքում տեղեկացնում են լիազոր մարմնին:»:

**Հոդված 2.** 28-րդ հոդվածում լրացել նոր 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող «C», «D», «CE», «DE», «C1E» և «D1E» կարգ ունեցող վարորդները պետք է հանձնեն նախնական մասնագիտական որակավորման տեսական քննություն և ստանան մասնագիտական որակավորման վկայագիր (ՄՈՎ): ՄՈՎ ունեցող վարորդներն առնվազն հինգ տարին մեկ պարբերականությամբ պետք է անցնեն մասնագիտական վերապատրաստման դասընթաց, որի վերաբերյալ պետք է նշում կատարվի վարորդի մասնագիտական որակավորման քարտի վրա: Առաջին վերապատրաստման դասընթացը վարորդը պետք է անցնի ոչ շուտ, քան ՄՈՎ-ը ստանալուց հինգ տարի հետո: Մասնագիտական վերապատրաստման գործընթացին և վարորդի որակավորման քարտին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա առաջին օրը: